Ծուշանիկ Կուրղինյան

Գարնան հովիկ

Գարո՞ւն է . . . գարո՞ւն . . . տափերի ընկեր
Հովիկը մարմանդ, հովիկը՝ հանդարտ
Ճամբա է ընկեր:

Կա՛ց . . . մի մոտենար . . . ետ դարձիր գնա . . .
Կամ անցիր գնա . . .

Գարո՞ւն է . . . բողբոջ . . . ծիլն 1 ծաղկում . . .
Ես ծիլեր ունեմ ցավագար սրտիս՝
Մութ ու ցուրտ ծալքում . . .

Գարո՞ւն է . . . հրդեհ . . . երկինքն է վառվում,
Ամպը՝ վառվռում . . .

Իմ հոգու խորքում թրջված ու ծեծված
Պեծեր են ծխում . . . թող . . . սուս փսփսան
Ու մարեն հանկարծ . . .

Ինձ մի մոտենար . . . ետ դարձիր գնա,
Կամ անցիր գնա . . .

'1907 թ. 27 մայիսի